ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2024 թվականի N 1543-Ա

N 969112 ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ, ԲԱԺԱՆՎԱԾ՝ 0.07773 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002թ. N 88 որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստան Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեներ պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման, և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով սեփականության իրավունքի N 969112 վկայականը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասերի և շինությունների հատակագծերը, բաժանման սխեմաները՝

որոշում եմ.

1. Պետական սեփականություն հանդիսացող՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Օձուն գյուղի վարչական տարածքում գտնվող, թիվ 1 միջնակարգ դպրոցի զբաղեցրած հողամասը բաժանել 1.72217 հա և 0.07773 հա մակերեսներով հողամասերի և համարել առանձին գույքային միավորներ:

2. Բաժանված՝ 1.72217 հա մակերեսով պետական սեփականություն հանդիսացող հողամասին և հողամասում առկա դպրոցի շենքին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 5-րդ փողոց, 4-րդ փակուղի, 10 փոստային հասցեն:

3. Բաժանված՝ 0.07773 հա մակերեսով հողամասում առկա ինտերնատի շենքի գործառնական նշանակությունը փոփոխել որպես հասարակական նշանակության մանկական արվեստի դպրոց օգտագործելու և տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 5-րդ փողոց, 4-րդ փակուղի, 10/1 փոստային հասցեն:

4.Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված և սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծերով:

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. հոկտեմբերի 16
ք. Ալավերդի